ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03

22 ԱՊՐԻԼԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Շահնուր Շուշանյանը, Անդրանիկ Նիկողոսյանը, Վրեժ Վարդանյանը, Աշոտ Գագյանը, Սեվակ Ջառահյանը, Էդվարդ Կիրակոսյանը, Հայկ Աբրահամյանը, Գառնիկ Ջահանգիրյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Վան Գաբրիելյան, Համլետ Արամյան, Լուսինե Մարկոսյան, Արթուր Քոչարյան, Տաթեվիկ Օհանյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Վազգեն Ադամյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արտակ Ստեփանյանը

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 5-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 22.04.2025 ԹՎԱԿԱՆԻ 3-ՐԴ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ. օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների պահանջներով.

Հաստատել Ճամբարակ համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 22.04.2025թ. 3-րդ հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ԱՎՏՈՏՆԱԿ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
2. 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ-ՀՈՂԱՄԱՍԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՈՒՅՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ /ԱՎՏՈՏՆԱԿ/ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԹՈՒՐ ՔՈՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 35-րդ կետի «դ» ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Ճամբարակ համայնքի ղեկավարի 11.01.2024թ. թիվ 20-Ա որոշումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ համայնքի սեփականություն հանդիսացող, Տ. Մեծի փող., 11/9 ավտոտնակ հասցեում գտնվող /վկայական 04042025-05-0045/ 05-002-0101-0041 կադաստրային ծածկագրով 0.00421 հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը և նույն հողամասի վրա գտնվող օրինականացված 34.13 քմ ներքին և 42.1 քմ արտաքին մակերեսով շինությունը /ավտոտնակ/ ուղղակի վաճառքով տրամադրել քաղաքացի Անժելա Վարդանյանին:
2. Քաղաքացի Անժելա Պավլու Վարդանյանը պարտավոր է Ճամբարակ համայնքի ֆոնդային բյուջե 900185061034 հաշվեհամարին որպես հողի կադաստրային արժեք վճարել 14 200 /տասնչորս հազար երկու հարյուր/ ՀՀ դրամ, իսկ շինության /ավտոտնակ/ համար համայնքի վարչական բյուջե 900185061232 հաշվեհամարին վճարել 31 300 /երեսունմեկ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ:
3. Որոշման ընդունման օրվանից սահմանված վճարները չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

ԼՍԵՑԻՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել 2024թ. Ճամբարակ համայնքում կատարված ամենամյա գույքագրման արդյունքները՝ համաձայն հավելվածների /կցվում է/:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ)

Ղեկավարվելով ՀՀ «Հարկային օրենսգրքի» 230-րդ հոդվածի 3-րդ կետի և 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով «Հողի հարկի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի (10-րդ հոդվածը լրաց. 05.04.00 ՀՕ-50, 30.04.08 ՀՕ-55-Ն, 08.12.11 ՀՕ-353-Ն, 21.03.12 ՀՕ-95-Ն) 11-րդ կետի պահանջները, ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները և մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել արտոնություններ հետևյալ չափերով՝

Հ/Հ	Անուն, ազգանուն	Հողի/գույքի գտնվելու հասցեն	Արտոնության տեսակը	Մայր գումար /ՀՀ դրամ/	Տույժ /ՀՀ դրամ/
1.	Արթուր Խաչատրյան	գ. Թթուջուր	Հողի հարկ	0	25612

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴԱՏԱԽԱԶԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՄԼԵՏ ԱՐԱՄՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության դատախազության Գեղարքունիքի մարզի դատախազի 2025 թվականի հունվարի 10-ի № 61-37/25 առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Շողակաթ բնակավայրի վարչական տարածքում գտնվող «Դամբարանադաշտ» հանրապետական նշանակության հուշարձանի պահպանության գոտու տարածքը՝ 3,88 հա և 0,38 հա հողամասը, Լյուդվիգ Ասատրյանին սեփականության իրավունքով տրամադրելու վերաբերյալ 2008թ. հուլիսի 4-ին կայացած աճուրդ-վաճառքը անվավեր ճանաչելու համար իրավասու դատարան հայցադիմում ներկայացնելուն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-0 Դեմ-13 Ձեռնպահ-0

Որոշումը չի ընդունվել. *(կցվում է որոշում N 38-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՏԱԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի ավագանու 5-րդ նստաշրջանի 4-րդ նիստի օր սահմանել 2025 թվականի մայիսի 22-ը, ժամը 15:00-ն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ-ՀՈՂԱՄԱՍԸ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(ԶԵԿ. ԱՐԹՈՒՐ ՔՈՉԱՐՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի կարիքների համար ձեռք բերել Ճամբարակ քաղաքի Գ. Նժդեհի փողոց, 85/1 հասցեում գտնվող, 05-002-0115-0023 կադաստրային ծածկագրով 0.04823 հա մակերեսով հողամասը:
2. Ձեռքբերման արժեքը կազմում է 163.000 /մեկ հարյուր վաթսուներեք հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

Ավագանու անդամներ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ

ՌՈԲԵՐՏ ՕՀԱՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՃԱՂԱՐՅԱՆ

ԱՆՈՒՇ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՐԱՅԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՋՈՒՐԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՋԱՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ՆԱԴԱՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԱԴԱՄՅԱՆ

ՄԻՇԱ ՂՈՒԿԱՍՅԱՆ

ՎԻԳԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՉԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Արտակ Ստեփանյանը

_____